

Հայտին առնչվող հարցումների վերաբերյալ Պարզաբանում No.5

Էլեկտրահաղորդման ցանցի բարելավման ծրագիր

**Երևանի ՋԷԿ-ի 220/110/35 կՎ ենթակայանի վերակառուցման համար կայանի նախագծման, մատակարարման և տեղակայման ձեռքբերում
(ICB No. ETNIP_YTPC_ICB_1/2015)**

17-ը նոյեմբերի, 2015թ.

No.	Հարցումներ հայտատուների կողմից	Պարզաբանում Գործատուի կողմից
1.	<p>Armenia YTPC Substation_final_corrected_upd.pdf և ETNIP_EMP_Yerevan TPP substation_final.pdf, Յուղի բաքեր</p> <p>156-րդ էջում 1.2.4.17.2 կետով պահանջվում է առկա յուղի պահպանման բաքի նորոգում: «Բնապահպանական կառավարման պլան» փաստաթղթի 11-րդ և 12-րդ էջերում ցույց են տրված և նկարագրված են առկա յուղի պահպանման բաքի փաստացի պայմանները:</p> <p>Երևանի ՋԷԿ-ի ենթակայանի տեղամասում պետք է հատուկ տարածք նախապատրաստվի, որտեղ հին յուղը կարելի է անվտանգ պահպանել: Այս տարածքը պետք է կնքվի և շրջապատվի բետոնե պատնեշով գրունտի / ստորգետնյա ջրերի աղտոտումը բացառելու համար, անգամ եթե բաքերից առկա է արտահոսք:</p> <p>Տեղանքը կտանիքապատվի բաքերի կոռոզիան նվազագույնի հասցնելու համար: Առկա յուղի պահպանման տեղամասը ցույց է տրված 5-1 լուսանկարում:</p> <p>Յուղի պահպանման համար կօգտագործվեն հատուկ բաքեր: Այս բաքերը կունենան կրկնակի պատեր և ապահովված կլինեն համապատասխան հնարավորություններով յուղը վերաօգտագործման նպատակով հանելու համար: Բաքի (բաքերի) չափերը պետք է այնքան մեծ լինեն, որ տեղավորեն ենթակայանի տեղամասում արդեն պահպանվող 297 տ յուղ, ինչպես նաև օգտագործվի հետագա նպատակների համար: Խորհուրդ է տրվում օգտագործել մոտ 25 մ³ ծավալով մի քանի բաք բաքերից արտահոսքի առկայության դեպքում ռիսկը նվազեցնելու համար:</p>	<p>«Բաժին VI. Գործատուի պահանջներ, Կետ 1.2.4.17. Շինարարական աշխատանքներ, ենթակետ 1.2.4.17.2. Նկարագրություն»-ը փոփոխվել է և պետք է ընթերցվի հետևյալ կերպ՝</p> <ul style="list-style-type: none"> Կապալառուն պետք է մատակարարի և տեղակայի 2 (երկու) յուղի պահպանման բաք՝ ըստ հետևյալ պահանջների՝ <ul style="list-style-type: none"> 1 (մեկ) յուղի պահպանման բաք ավտոտրանսֆորմատորի համար՝ ավտոտրանսֆորմատորի յուղի տարողունակության 1 (մեկ) յուղի պահպանման բաք 9S և 10S տրանսֆորմատորների համար՝ ըստ տրանսֆորմատորների յուղի տարողունակության (յուղի ընդհանուր տարողունակությունը՝ 40 տոննա) <p>Թույլատրվում է նորոգել և վերաօգտագործել Երևանի ՋԷԿ-ի առկա յուղի պահպանման բաքերը:</p> <p>Համապատասխան ծախսերը պետք է ներառվեն շինարարական աշխատանքների ծավալում համապատասխան գնային աղյուսակում:</p>

No.	Հարցումներ հայտատուների կողմից	Պարզաբանում Գործատուի կողմից
	<p>14.1 Խնդրում ենք հաստատել, որ յուրի պահպանման համար օգտագործվելու են առկա բաքերը, այլ ոչ թե առաքվելու են նորերը:</p> <p>14.2 Խնդրում ենք նաև խորհուրդ տալ, թե գնային աղյուսակի որ կետի տակ մենք պետք է դիտարկենք և ներառենք առկա յուրի պահպանման բաքի նորոգման ծախսերը:</p>	
2.	<p>Բաժին VI. Գործատուի պահանջները. Տեխնիկական աղյուսակ A. 200 ՄՎԱ, 220/110 կՎ լարման ավտոտրանսֆորմատոր՝</p> <p>1. Տեխնիկական տվյալների աղյուսակում սահմանված վեկտորային խումբը YNyn0 է, մինչդեռ այն պետք է լինի YNa0: Խնդրում ենք ստուգել և հաստատել:</p> <p>2. Առաջնայինի/երրորդայինի (10%) միջև կարճ միացման դիմադրությունը ավելի պակաս է, քան առաջնայինի/երկրորդայինի միջև եղածը (12%), ինչը ոչ ստանդարտ է: Խնդրում ենք ստուգել և հաստատել:</p> <p>3. Առաջնային (220կՎ) չեզոքի և երկրորդային (110 կՎ) չեզոքի ելուստների մասին հարցվել է առանձին տեխնիկական տվյալների աղյուսակում: Ավտոտրանսֆորմատորի համար չեզոքը պետք է լինի ընդհանուր առաջնայինի և երկրորդայինի միջև, ուստի պետք է տրամադրվի միայն մեկ ելուստ: Բացի այդ, քանի որ ավտոտրանսֆորմատորը ունի ոչ համասեռ մեկուսացում, մենք կտրամադրենք 36 կՎ լարման ընդհանուր չեզոք ելուստ: Խնդրում ենք հաստատել, որ սա ընդունելի է:</p>	<p>1. YNyn0 նշանակում է Yna0:</p> <p>2. Ամեն դեպքում Հայտատուն պետք է ներկայացնի իր առաջարկը՝ ըստ արտադրողի ստանդարտների:</p> <p>3. Մեկ ելուստը ևս ընդունելի է: Ինչ վերաբերում է մեկուսացմանը, ապա, ըստ հայկական ստանդարտների, այն պետք է լինի 110 կՎ: Հայտատուն իր առաջարկում պետք է նշի համապատասխան միջազգային կամ արտադրողի ստանդարտը:</p>
3.	<p>B. 27,5 ՄՎԱ, 110/35/6 կՎ լարման տրանսֆորմատոր՝</p> <p>1. Տրանսֆորմատորի նոմինալ հզորությունը սահմանված է 27,5 ՄՎԱ, մինչդեռ երկրորդային փաթույթի նոմինալ հզորությունը 20 ՄՎԱ է, իսկ երրորդայինի նոմինալ հզորությունը 11 ՄՎԱ է, որոնց հանրագումարը կազմում է 31 ՄՎԱ, ինչը գերազանցում է տրանսֆորմատորի նոմինալ հզորությունը: Խնդրում ենք ստուգել և հաստատել:</p> <p>2. Մենք հասկանում ենք, որ կարճ միացման դիմադրությունը առաջնայինի և երկրորդայինի միջև 10% է 27,5 ՄՎԱ-ի պայմաններում: Սակայն դիմադրությունը առաջնայինի/երրորդայինի միջև, ինչպես նաև երկրորդայինի/երրորդայինի միջև տրված չէ: Խնդրում ենք ստուգել և հաստատել, եթե առկա է դիմադրության պահանջվող որևէ հատուկ տեսակ, որը մենք կկարողանանք գնանշել՝ համաձայն մեր նախագծի:</p> <p>3. Ըստ տեխնիկական տվյալների աղյուսակի՝ առաջնային չեզոք</p>	<p>1. Տե՛ս Պարզաբանում No.2, Նախամրցութային հանդիպման համար պարզաբանումների խնդրանք, կետ 6-ը, որտեղ 35 կՎ և 6 կՎ լարման սպառողների համար փաստացի բեռերը նշված են: 35 կՎ լարման համար բեռը 14,5 ՄՎտ է, ինչը հավասար է 17,8 ՄՎԱ-ի, իսկ 6 կՎ լարման համար բեռը 7 ՄՎտ է, ինչը հավասար է 8,2 ՄՎԱ-ի: Այսինքն՝ $17,8 \text{ ՄՎԱ} + 8,2 \text{ ՄՎԱ} = 26 \text{ ՄՎԱ}$:</p> <p>2. Այն պետք է համապատասխանի արտադրողի ստանդարտներին:</p> <p>3. Այն պետք է համապատասխանի արտադրողի ստանդարտներին:</p>

No.	Հարցումներ հայտատուների կողմից	Պարզաբանում Գործատուի կողմից
	Ելուստի լարման մակարդակը սահմանված է 123 կՎ: Այնուհանդերձ, ոչ համասեռ մեկուսացված տրանսֆորմատորի համար չեզոքի մակարդակը պետք է լինի մոտավորապես 36 կՎ: Խնդրում ենք ստուգել և հաստատել:	
4.	<p>Բաժին III, Կետ 2.7, Որակավորման չափանիշներ 27,5 ՄՎԱ, 110/35/6 կՎ լարման ուժային տրանսֆորմատորի համար</p> <p>Մենք հասկանում ենք, որ ուժային տրանսֆորմատորի համար սահմանված որակավորման չափանիշները պետք է կիրառելի լինեն միայն 200 ՄՎԱ, 220/110 կՎ լարման ուժային տրանսֆորմատորի համար, սակայն 27,5 ՄՎԱ, 110/35/6 կՎ լարման ուժային տրանսֆորմատորների համար դրանք կիրառելի չեն: Խնդրում ենք հաստատել:</p>	Տե՛ս մրցութային փաստաթղթերի պահանջները:
5.	Մրցույթը պահանջում է հսկայական համակարգում տարբեր արտադրողների հետ համապատասխան տեխնիկական առաջարկների համար: Մեր մատակարարողներին անհրաժեշտ է նախագծել սարքավորումները -27°C-ից մինչև 42° C պայմանների համար, որի համար նրանք պահանջում են 3-ից 4 շաբաթ իրենց համապատասխան առաջարկը ներկայացնելու համար: Հաշվի առնելով նշվածը՝ մենք խնդրում ենք ձեզ ներկայիս մրցութային վերջնաժամկետը երկարաձգել 3-4 շաբաթով:	Հայտերի ներկայացման վերջնաժամկետը երկարաձգվել է 3 շաբաթով, մինչև 30-ը նոյեմբերի, 2015 թ., ժամը՝ 13:00 (տեղական ժամանակով): Դրանից ավելի երկարաձգում հնրավոր չէ:
6.	<p>ՀՊ 7.1, a), Սարքավորումների ծավալը</p> <p>a) Կապալառուն համաձայնում է գործարկումից հետո տրամադրել 6 ամսվա շահագործման և տեխսպասարկման աջակցման ժամանակահատված, ինչը նշանակում է, որ Կապալառուն գործարկումից հետո 6 ամսվա ընթացքում պետք է ապահովի իր իրազեկ մասնագետների մշտական առկայությունը կառուցման տեղամասում Գործատուի անձնակազմին աջակցելու համար: Խնդրում ենք պարզաբանել, թե արդյոք շահագործման և տեխսպասարկման անձնակազմը պետք է առկա լինի օրվա բոլոր երեք հերթափոխերի համար:</p>	Սա ամբողջովին կախված է կառուցված ենթակայանի որակի մակարդակից, ինչպես նաև Գործատուի անձնակազմի ուսուցման որակից:
7.	<p>ՀՊ 13, Երաշխիքներ</p> <p>Խնդրում ենք հաստատել, թե արդյոք ընդունելի է իրականացման երաշխիք և կանխավճարային երաշխիք հեղինակավոր հնդկական բանկի կողմից թողարկված բանկային երաշխիքի տեսքով:</p>	Կանխավճարային և իրականացման երաշխիքները պետք է թողարկվեն առնվազն թողարկողի BBB երկարաժամկետ կրեդիտային վարկանիշ ունեցող բանկի կողմից՝ համաձայն Standard & Poor's-ի կամ այլ գործակալությունների (Moody's, Fitch) համարժեք կրեդիտային վարկանիշի:
8.	ՀՊ 14, Հարկեր և տուրքեր	a. և b. Բոլոր մաքսատուրքերը կվճարվեն Գործատուի կողմից, ուստի

No.	Հարցումներ հայտատուների կողմից	Պարզաբանում Գործատուի կողմից
	<p>Խնդրում ենք հաստատել հետևյալը՝</p> <p>a. Արդյո՞ք արտասահմանից մատակարարված սարքավորումների համար կիրառվում է մաքսատուրք: Եթե այդպես է, ապա ո՞վ պետք է վճարի մաքսատուրքերը, և արդյո՞ք դրանք պետք է ներառվեն գների մեջ:</p> <p>b. Արդյո՞ք ԱԱՀ կիրառելի է արտասահմանից մատակարարված սարքավորումների նկատմամբ: Եթե այո, ապա ո՞րն է ԱԱՀ-ի կիրառելի տոկոսադրույքը, և արդյո՞ք այն պետք է ներառվի գների մեջ:</p> <p>c. Արդյո՞ք ԱԱՀ-ն և տեղական հարկերը կիրառելի են տեղական մատակարարումների նկատմամբ: Եթե այո, ապա որո՞նք են ԱԱՀ-ի և հարկերի տոկոսադրույքները:</p> <p>d. Արդյո՞ք ԱԱՀ-ն և տեղական հարկերը կիրառելի են տեղակայման և շինարարական աշխատանքների նկատմամբ: Եթե այո, ապա որո՞նք են ԱԱՀ-ի և հարկերի տոկոսադրույքները:</p> <p>d. Արդյո՞ք որևէ հարկային պահումներ կիրառվում են: Եթե այո, ապա ո՞րն է պահումների տոկոսադրույքը, և արդյո՞ք այն կիրառվելու է միայն տեղակայման և շինարարական աշխատանքների նկատմամբ:</p> <p>e. Խնդրում ենք հաստատել, թե արդյոք ոչ ռեզիդենտի շահութահարկը նվազեցվելու է Գործատուի կողմից յուրաքանչյուր հաշվի նկատմամբ:</p>	<p>հայտատուները չպետք է հաշվարկեն ներկրման տուրքեր և հարկեր, ինչպես օրինակ՝ ԱԱՀ, և չպետք է ներառվեն առաջարկի գնի մեջ:</p> <p>c. Տեղական մատակարարումների համար (գնային աղյուսակ 2) խնդրում ենք հետևել ՑՀ 17.5 (b) կետում նշված ցուցումներին: ԱԱՀ տոկոսադրույքը պետք է լինի համաձայն ՀՀ օրենսդրության:</p> <p>d. Տեղակայման և շինարարական աշխատանքների համար (գնային աղյուսակ 4) խնդրում ենք հետևել ՑՀ 17.5 (d) կետում նշված ցուցումներին: ԱԱՀ տոկոսադրույքը պետք է լինի համաձայն ՀՀ օրենսդրության:</p> <p>d. Խնդրում ենք հետևել մրցութային փաստաթղթերի պահանջներին:</p> <p>e. Խնդրում ենք հետևել մրցութային փաստաթղթերի պահանջներին:</p>
9.	<p>ՀՊ 14, Հարկեր և տուրքեր</p> <p>Պայմանագրային գները շինարարա-մոնտաժային, նախագծման և այլ աշխատանքների համար, ինչպես նաև պայմանագրի շրջանակներում իրականացվող ծառայությունների համար չպետք է ներառվեն անուղղակի հարկեր, որոնք սահմանված են ՀՀ հարկային օրենսդրությամբ, այսինքն՝ ԱԱՀ և այլն: ՀՀ հարկային օրենսդրությամբ սահմանված ուղղակի հարկերը, այսինքն՝ ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ շահութահարկ, եկամտահարկ և այլն պետք է ներառվեն պայմանագրային գների մեջ: Խնդրում ենք պարզաբանել, թե ո՞ր հարկերը և հարկային ի՞նչ տոկոսադրույքներ պետք է ուղղակիորեն նվազեցվեն Գործատուի կողմից:</p>	<p>Ձեր հարցը հստակ չէ:</p>
10.	<p>ՀՊ 21.4, Մաքսազերծում</p> <p>Խնդրում ենք մեզ տեղեկացնել, թե արդյոք մոնտաժման գործիքները, տեստավորման սարքավորումները և այլն, որոնք պետք է ներկրվեն ՀՀ, նույնպես ազատված են մաքսատուրքից:</p> <p>Արդյո՞ք Գործատուն կթողարկի անհրաժեշտ փաստաթղթեր դրանց համար:</p>	<p>Ձեր հարցը հստակ չէ:</p>

No.	Հարցումներ հայտատուների կողմից	Պարզաբանում Գործատուի կողմից
11.	<p>ՀՊ 23.2, Տեստ և ինսպեկցիա Կապալառուն պետք է կրի գործարանային տեստավորումների կազմակերպման բոլոր ծախսերը (տրանսպորտ, կացարան, սնունդ, ինչպես նաև օրապահիկ) տեստավորումների, ինչպես նաև Գործատուի ներկայացուցիչների համար Հայաստանից դեպի տեստավորման վայր ճանապարհորդության և վերադարձի ժամանակ: Խնդրում ենք տրամադրել հետևյալ մանրամասները՝</p> <p>a. Հյուրանոցի դասը b. Լանչի օրապահիկը c. Օժանդակ օրապահիկը d. Ինքնաթիռով ճանապարհորդության դասը</p>	<p>a. b. և c. Քանի որ մենք չգիտենք, թե որ երկրում են իրականացվելու գործարանային տեստավորումները, ուստի ձեր հարցը ճիշտ չէ: d. Ինքնաթիռով ճանապարհորդությունը պետք է լինի Էկոնոմ դասի:</p>
12.	<p>ՑՀ 20.3, Հայտի երաշխիք (a) Բանկի կամ երաշխավորողի կողմից թողարկված անվերապահ երաշխիք իրավասու երկրի հեղինակավոր աղբյուրից: Մենք կարծում ենք, որ հեղինակավոր հնդկական բանկի կողմից բանկային երաշխիքն ընդունելի կլինի:</p>	<p>Հայտի երաշխիքը պետք է թողարկվի կոմերցիոն բանկի կողմից թողարկողի երկարաժամկետ կրեդիտային BB վարկանիշով՝ համաձայն Standard & Poor’s-ի կամ այլ գործակալությունների կողմից (օրինակ՝ Moody’s, Fitch) համարժեք կրեդիտային վարկանիշի, կամ թողարկողի կարճաժամկետ կրեդիտային B վարկանիշի:</p>
13.	<p>ՀՊ 24.2, Սարքավորումների ավարտում Գործատուն կտրամադրի Կապալառուին միայն ջրամատակարարում և էլեկտրաէներգիայի մատակարարում: Մենք ենթադրում ենք, որ Կապալառուն չի վճարի Գործատուին նշվածի համար:</p>	<p>Գործատուն կտրամադրի միացման կետեր ջրամատակարարման և էլեկտրամատակարարման համար: Հաշվիչների միացման, տեղակայման աշխատանքները և սպառողներից գանձումները պետք է կատարվեն Կապալառուի կողմից:</p>
14.	<p>Ընդհանուր Խնդրում ենք տրամադրել ապամոնտաժման ընթացակարգը և ապամոնտաժված սարքավորման պահպանման վայրը:</p>	<p>Ապամոնտաժված սարքավորումը պետք է հանձնվի Գործատուին և պահպանվի Երևանի ՋԷԿ-ի պահպանման տարածքներում: Ինչ վերաբերում է ապամոնտաժման ընթացակարգին, ապա ձեր հարցը կամ ճշգրիտ չէ կամ հստակ չէ:</p>
15.	<p>Միագիծ սխեմա No. 1258942 (Երևանի ՋԷԿ-ի 220/110/35 կՎ լարման ենթակայան) Մենք հասկանում ենք, որ ծավալը ներառում է հետևյալը՝ A) 220 կՎ լարման 1½ անջատիչի համակարգ (8 բջիջ + 2 դողային լարման տրանսֆորմատոր) 1) 4 գծային բջիջ (Մարաշ, ՀԱԷԿ, Հաղթանակ և Արարատ-2) 2) 1 տրանսֆորմատորային բջիջ (200 ՄՎԱ, 220/110 կՎ) 3) 3 կապող բջիջ 4) 2 դողային լարման տրանսֆորմատորի բջիջ B) 110 կՎ լարման կրկնակի դող շրջանցիկ դասավորությամբ (19 բջիջ + 2 դողային լարման տրանսֆորմատոր)</p>	<p>Տե՛ս միագիծ սխեման և մրցութային փաստաթղթերը:</p>

No.	Հարցումներ հայտատուների կողմից	Պարզաբանում Գործատուի կողմից
	<p>1) 10 գծային բջիջ (Նորք, Արարատ-2, Մխչյան, Այնթապ, գազատուրբիններ, շոգետուրբիններ, Նաիրիտ-1, Նաիրիտ-2, Հարավային-1 և Հարավային-2)</p> <p>2) տրանսֆորմատորի 1 մուտքային բջիջ (200 ՄՎԱ, 220/110 կՎ)</p> <p>3) միջդողային անջատիչի 1 բջիջ</p> <p>4) 2 տրանսֆորմատորային բջիջ (27 ՄՎԱ, 110/35/6 կՎ)</p> <p>5) 4 տրանսֆորմատորային բջիջ (110/6 կՎ)</p> <p>6) 2 դողային լարման տրանսֆորմատոր</p> <p>7) 1 փոխանցման բջիջ</p> <p>C) 35 կՎ լարման գազամեկուսացված բաշխիչ սարք (13 բջիջ + 2 դողային լարման տրանսֆորմատոր)</p> <p>1) տրանսֆորմատորի 2 մուտքային բջիջ (27 ՄՎԱ, 110/35/6 կՎ)</p> <p>2) Օժանդակ տրանսֆորմատորի 2 բջիջ (400 կՎԱ, 35/0,4 կՎ)</p> <p>3) սնուցիչի 8 բջիջ (Քիմոեակտիվ-1 և 2, Մալուխային գիծ 1 և 2, CGT-1 և 2, Պահուստային 1 և 2)</p> <p>4) դողային լարման տրանսֆորմատորի 2բջիջ</p> <p>4) 1 դողային սեկցիոն բաժանիչ</p> <p>E) Տրանսֆորմատորներ</p> <p>1) 1x200 ՄՎԱ, 220/110 կՎ լարման տրանսֆորմատոր</p> <p>2) 2x27 ՄՎԱ, 110/35/6 կՎ լարման տրանսֆորմատոր</p> <p>3) 2x400 կՎԱ, 35/0,4 կՎ լարման օժանդակ տրանսֆորմատոր</p> <p>F) 6 կՎ լարման ներքին բաշխիչ սարք (2 պանել)</p> <p>Խնդրում ենք հաստատել, թե արդյոք մենք ճիշտ ենք ընկալել:</p>	
16.	<p>Ընդհանուր</p> <p>Խնդրում ենք հաստատել, որ պահանջվում են 220 կՎ լարման գծային բջիջների (Մարաշ, Հայաստանի ատոմային էլեկտրակայան, Հաղթանակ և Արարատ-2) պարպիչները:</p>	<p>Դա կախված է հաղորդաձողի վրա Կապալառուի կողմից տեղակայվելիք պարպիչների տեսակից և աշխատանքային գոտուց:</p>
17.	<p>Ընդհանուր</p> <p>Խնդրում ենք հաստատել, որ 110/6 կՎ լարման տրանսֆորմատորի տեղակայումը, տեստավորումը և գործարկումը ներառված է Հայտատուների ծավալում:</p>	<p>Առկա է երկու (2) 110/6 կՎ լարման տրանսֆորմատոր: Նրանք այժմ տեղակայված են հիմքերում և շահագործման մեջ են: Հայտատուների ծավալը պետք է ներառի այդ տրանսֆորմատորների 110/6 կՎ լարման կողմի ապամոնտաժումը և 110/6 կՎ լարման կողմի վերամիացումը՝ համաձայն մրցութային փաստաթղթերի պահանջների:</p>
18.	<p>1 1.1.3.2 և 1.1.3.3 Բաժին IV - Աղյուսակ No</p> <p>Միագիծ սխեմայի նման (110 կՎ լարման համակարգ), առկա են 20 բաժանիչ (եռաֆազ) 2 հողանցման դանակով և 21 բաժանիչ (եռաֆազ) 1</p>	<p>Տե՛ս Պարզաբանում 2-ի կետ 30-ը:</p>

No.	Հարցումներ հայտատուների կողմից	Պարզաբանում Գործատուի կողմից
	հողանցման դանակով, սակայն, ըստ Բաժին IV (Հայտերի ձևեր), Աղյուսակ No.1, կետ 1.1.3.2-ի, նշված է 41 հատ 110 կՎ լարման բաժանիչ (եռաֆազ) + հողանցման դանակ: Խնդրում ենք պարզաբանել համապատասխանաբար 1 հողանցման դանակով և 2 հողանցման դանակով բաժանիչների քանակը:	
19.	1.1.3.4 Բաժին IV - Աղյուսակ No. 1 Խնդրում ենք տեղեկացնել 110 կՎ լարման հողանցման դանակի (միաֆազ) տեղանքի մասին:	Կարծես, թե այս հարցն առնչվում է նախագծման խնդրին:
20.	Ընդհանուր Խնդրում ենք հաստատել, որ պահանջվում են պարպիչներ 110 կՎ լարման գծերի բջիջների համար (Նորք, Արարատ-2, Մխչյան, Այնթապ, գազատուրբիններ, շոգետուրբիններ, Նաիրիտ-1, Նաիրիտ-2, Հարավային-1 և Հարավային-2):	Դա կախված է հաղորդաձողի վրա Կապալառուի կողմից տեղակայվելիք պարպիչների տեսակից և աշխատանքային գոտուց:
21.	Ընդհանուր Գծագիր No. 1259824 –ից մենք հասկանում ենք, որ բոլոր բաժանիչները հորիզոնական դիրքով կենտրոնական բաժանիչներ են: Խնդրում ենք հաստատել:	Մրցութային փաստաթղթերում Գծագիր No. 1259824 գոյություն չունի:
22.	Ընդհանուր Խնդրում ենք տրամադրել տեխնիկական բնութագրեր հետևյալի վերաբերյալ՝ 1) Ուժային և կառավարման մալուխներ 2) Հողանցում և կայծակից պաշտպանություն 3) Հաղորդաձողի և սարքավորման փոխմիացման հաղորդալար 4) Սեղմակներ և միակցիչներ 5) Շարանային մեկուսիչներ 6) Շարանային սարքակազմ 7) Հակահրդեհային համակարգ (ջրցան հրդեհամարում) 9) LT բաշխիչ սարք (փոփոխական և հաստատուն հոսանքների բաշխման համակարգ)	Այդ տեխնիկական բնութագրերը կորոշվեն նախագծային փուլից հետո նախագծողի կողմից:
23.	Ընդհանուր Մենք մասնակցում ենք մրցութին գլխավոր Կապալառուի հետ կոնսորցիումով: Մենք ենթադրում ենք, որ կոնսորցիումի յուրաքանչյուր անդամ ձեռք կբերի մրցութային փաստաթղթերը: Խնդրում ենք պարզաբանել:	Մրցութային փաստաթղթեր ձեռք բերած ցանկացած ընկերություն կարող է ներկայացնել իր հայտը որպես առանձին կամ համատեղ ձեռնարկություն:
24.	565,566-691 Մեկ նմանատիպ միկրոպրոցեսորային սարքավորում 220	Տե՛ս նախամրցութային հանդիպման արձանագրության կետ 3,

No.	Հարցումներ հայտատուների կողմից	Պարզաբանում Գործատուի կողմից
	<p>կՎ լարման օդային գծի հակառակ ծայրում, և բացի այդ կատարել առկա 7SA522 պաշտպանության արագացում օպտիկա-մանրաթելային կապուղու միջոցով:</p> <p>Խնդրում ենք հաստատել, որ 220 կՎ լարման ՕԳ-ի հակառակ ծայրում նախատեսված է պահանջվող մեկ միկրոպրոցեսորային սարքավորում օպտիկա-մանրաթելային կապուղիների կամ PLCC համակարգի միջոցով, քանի որ 4 հատ 220 կՎ լարման ՕԳ-ների հակառակ ծայրն ունի 7SA522 պաշտպանության ռելե օպտիկա-մանրաթելային կապուղիների միջոցով, և միայն այս պահանջվող միկրոպրոցեսորային պաշտպանության ռելեն է նախատեսված մատակարարման ծավալում:</p>	ենթակետ b)
25.	<p>566,567-691 Արարատ-2, Այնթապ, Մխչյան և Նորք 110 կՎ ՕԳ-ի պաշտպանություններ, Անհրաժեշտ է նախատեսել երկու միանման միկրոպրոցեսորային սարքավորում Արարատ-2-ի և Նորքի 110 կՎ լարման ՕԳ-ի յուրաքանչյուր հակառակ ծայրում, ինչպես նաև իրականացնել ՕԳ-ի պաշտպանությունների արագացում օպտիկա-մանրաթելային կապուղիների միջոցով:</p> <p>Խնդրում ենք հաստատել, որ պահանջվող երկու միանման միկրոպրոցեսորային սարքավորում է նախատեսված Արարատ-2-ի և Նորքի համար 110 կՎ լարման ՕԳ-ի հակառակ ծայրում օպտիկա-մանրաթելային կապուղու կամ PLCC համակարգի միջոցով, քանի որ առաջարկվող հատակագծում նշված է, որ սնուցիչներն ունեն գծային սահմանափակիչ, իսկ միագիծ սխեմայի վրա նշված չէ, և մատակարարման ծավալում ներառված է միայն միկրոպրոցեսորային պաշտպանության ռելեն:</p>	Տե՛ս Պարզաբանում No. 3-ին կից ԷԷՀՕ-ի No. 01-ՄՄ-12/626 նամակը:
26.	<p>566,567-691 Արարատ-2, Այնթապ, Մխչյան և Նորք 110 կՎ ՕԳ-ի պաշտպանություններ: Անհրաժեշտ է նախատեսել երկու միանման միկրոպրոցեսորային սարքավորում Արարատ-2-ի և Նորքի 110 կՎ լարման ՕԳ-ի յուրաքանչյուր հակառակ ծայրի համար, ինչպես նաև իրականացնել ՕԳ-ի պաշտպանությունների արագացում օպտիկա-մանրաթելային կապուղիների միջոցով: Խնդրում ենք հաստատել, որ պահանջվող երկու միանման միկրոպրոցեսորային սարքավորում է նախատեսված Այնթապի և Մխչյանի համար 110 կՎ լարման ՕԳ-ի հակառակ ծայրում օպտիկա-մանրաթելային կապուղու կամ PLCC համակարգի միջոցով, քանի որ առաջարկվող հատակագծում նշված է, որ սնուցիչներն ունեն գծային սահմանափակիչ, իսկ միագիծ սխեմայի</p>	Տե՛ս Պարզաբանում No. 3-ին կից ԷԷՀՕ-ի No. 01-ՄՄ-12/626 նամակը:

No.	Հարցումներ հայտատուների կողմից	Պարզաբանում Գործատուի կողմից
	վրա նշված չէ, և մատակարարման ծավալում ներառված է միայն միկրոպրոցեսորային պաշտպանության ռելեն:	
27.	<p>568-691 Նախատեսել երկու միանման միկրոպրոցեսորային սարքավորումներ Նաիրիտ-1,2 և Հարավային 1,2 110 կՎ լարման ՕԳ-ների յուրաքանչյուր հակառակ ծայրում, ինչպես նաև իրականացնել ՕԳ-ների պաշտպանությունների արագացում օպտիկամանրաթելային կապուղիների միջոցով:</p> <p>Խնդրում ենք հաստատել, որ միայն 110 կՎ լարման ՕԳ-ի յուրաքանչյուր հակառակ ծայրում գտնվող երկու միանման միկրոպրոցեսորային պաշտպանության ռելենները ներառված են մատակարարման ծավալում:</p>	Տե՛ս նախամրցութային հանդիպման արձանագրության կետ 3, ենթակետ b):
28.	<p>Պարզաբանում No.2, կետ 47, Բաժին VI-ի գնային աղյուսակներ, 220 կՎ լարման նոր ենթակայանը պետք է կառուցվի առկա 220 կՎ լարման ենթակայանի տարածքում, և համապատասխանաբար 220 կՎ լարման առկա ենթակայանը պետք է ապամոնտաժվի:</p> <p>220 կՎ լարման ելնող գծերի անկյունային հենարանների կոորդինատները և տեղանքը բացակայում են տարածքի ներկայացված գլխավոր հատակագծում: Խնդրում ենք տրամադրել 220 կՎ լարման գծերի ուղիները (անկյունային հենարանի և ելնող գծերի հաջորդ երկու հենակների կոորդինատները):</p>	220 կՎ լարման ելնող գծերի անկյունային հենարանների կոորդինատները և տեղանքը կորոշվի նախագծման փուլում:
29.	<p>Պարզաբանում No.2, կետ 47, Բաժին VI-ի գնային աղյուսակներ, 220 կՎ լարման նոր ենթակայանը պետք է կառուցվի առկա 220 կՎ լարման ենթակայանի տարածքում, և համապատասխանաբար 220 կՎ լարման առկա ենթակայանը պետք է ապամոնտաժվի:</p> <p>Ըստ գլխավոր հատակագծի՝ առկա է գոյություն ունեցող 220 կՎ լարման ենթակայանին կից բավարար ազատ տարածք 220 կՎ լարման նոր ենթակայան կառուցելու համար: Արդյո՞ք թույլատրվում է փոխարենը կառուցել 220 կՎ լարման նոր ենթակայան ազատ տարածքում (առանց առկա 220 կՎ լարման ենթակայանը ապամոնտաժելու):</p>	Ոչ, չի թույլատրվում:
30.	<p>Պարզաբանում No. 2, կետ 48, Բաժին VI, Գործատուի պահանջներ, կետ No. 1.2.1.4, էջ 133/691 220 կՎ լարման ենթակայանի ծավալ</p> <p>Ըստ աշխատանքների ծավալի՝ 220 կՎ լարման 8 բջիջ (5 բջիջ + 3 պահուստային բջիջ) պետք է մատակարարվեն և տեղակայվեն, մինչդեռ 1.2.1.4.2.1 կետում և միագլիծ սխեմայում նշված է 6 բջիջ՝ 5 բջիջ + 1 պահուստային բջիջ:</p>	Սա նշանակում է հետագա ծրագրերում սարքավորումների տեղակայման համար պատրաստ ազատ և մաքուր տարածք:

No.	Հարցումներ հայտատուների կողմից	Պարզաբանում Գործատուի կողմից
	<p>Ի՞նչ է նշանակում «+1 պահուստային բջիջ (չսարքավորված)» և «ազատ տարածք 2 նոր բջիջների համար (առանց սարքավորման մատակարարման)»: Ո՞րն է տարբերությունը: Արդյո՞ք հայտատուները պետք է կառուցեն հիմքերը միայն պահուստային բջիջների համար: Որո՞նք են մատակարարման ծավալի սահմանները:</p>	
31.	<p>Պարզաբանում No.2, կետ 51 Բաժին VI, Գործատուի պահանջներ, կետ 1.1.2.2, Ընդհանուր, Ինժեներական նախագծերի և գծագրերի հաստատումներ, Ծրագրի հիմնական մասը պետք է հաստատվի «Երևանի ՋԷԿ» ՓԲԸ կողմից, իսկ որոշ մասը՝ «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲԸ կողմից: Համաձայն մրցութային փաստաթղթերի Բաժին VIII-ի (Հատուկ պայմաններ) 9-րդ կետի (Կապալառուի պատասխանատվություններ)՝ կայանի ծրագրի փաստաթղթերի հաստատման, ինչպես նաև բոլոր անհրաժեշտ թույլտվությունների, հաստատումների, լիցենզիաների ձեռքբերումը Կապալառուի պատասխանատվության շրջանակում են: Հաշվի առնելով Երևանի ՋԷԿ-ի նախկին փորձը՝ վերոնշյալ թույլտվությունները և հաստատումները կարող են ձեռք բերվել փուլ առ փուլ (փաստաթղթերի պատրաստ լինելուն պես): Այս ընթացքում Գործատուն շարունակաբար կաջակցի Կապալառուին բոլոր հնարավոր միջոցներով:</p> <p>«Բոլոր անհրաժեշտ թույլտվությունների, հաստատումների, լիցենզիաների ձեռքբերումը Կապալառուի պատասխանատվության շրջանակում են»:</p> <p>Խնդրում ենք հստակեցնել, թե հատկապես ո՞ր լիցենզիաները և թույլտվություններն են անհրաժեշտ:</p> <p>Որքա՞ն ժամանակ է հարկավոր բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը Կապալառուի կողմից ներկայացնելու համար:</p>	<p>Բոլոր անհրաժեշտ թույլտվությունների, հաստատումների, լիցենզիաների և այլն ձեռքբերման ընթացակարգը ղեկավարվում է ՀՀ օրենսդրությամբ: Ընթացակարգը երկարատև չէ, սակայն այն ուղղակիորեն կապված է Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների որակի հետ:</p>
32.	<p>Բաժին I. Ցուցումներ Հայտատուներին 20. Բանկային երաշխիք, կետ 20.3</p> <p>20.3 կետում նշված է, որ «Եթե անվերապահ երաշխիքը տրվել է Գործատուի երկրից դուրս գտնվող ապահովագրական կամ երաշխավորող ընկերության կողմից, ապա թողարկողը պետք է ունենա համապատասխան ֆինանսական ինստիտուտ Գործատուի երկրում այն հնարավոր դարձնելու համար»:</p> <p>Մեր ընկերությունը աշխատում է մի քանի հեղինակավոր բանկերի հետ, որոնք ունեն B նվազագույն վարկանիշ, սակայն նրանցից և ոչ</p>	<p>Ինչպես նշել եք, «Եթե անվերապահ երաշխիքը տրվել է Գործատուի երկրից դուրս գտնվող <u>ապահովագրական կամ երաշխավորող ընկերության</u> կողմից, ապա թողարկողը պետք է ունենա համապատասխան ֆինանսական ինստիտուտ Գործատուի երկրում այն հնարավոր դարձնելու համար»: Բանկային երաշխիքի դեպքում հայտատուի բանկից չի պահանջվում ունենալ մասնաճյուղ կամ համապատասխան ֆինանսական ինստիտուտ Գործատուի երկրում:</p>

No.	Հարցումներ հայտատուների կողմից	Պարզաբանում Գործատուի կողմից
	<p>մեկը մասնաճյուղ չունի Հայաստանում:</p> <p>Մեր ընկերությունը աշխատում է մի քանի հեղինակավոր բանկերի հետ, որոնք B նվազագույն վարկանիշ ունեն, սակայն նրանցից ոչ մեկը մասնաճյուղ չունի Գործատուի երկրում: Խնդրում ենք հաստատել, որ այսպիսի բանկի կողմից կարող է տրվել բանկային երաշխիք, և որ այդ բանկին անհրաժեշտ չէ ունենալ համապատասխան ֆինանսական ինստիտուտ Գործատուի երկրում:</p>	
33.	<p>Բաժին VI, Գործատուի պահանջներ, կետ 8.2</p> <p>Կարո՞ղ եք մատնանշել առկա RTU և SCADA համակարգերի արտադրողին/մոդելը: Կապի ո՞ր պրոտոկոլն է ավելի նախընտրելի օգտագործել առկա RTU համակարգի և հետագա թվայնացված կառավարման համակարգի (ԹԿՀ) միջև:</p>	<p>Տե՛ս Պարզաբանում No. 2-ի կետ 67-ը:</p> <p>Առկա SCADA համակարգի արտադրող - ABB</p>
34.	<p>Բաժին VI. Գործատուների պահանջներ, էջ 148, 1.2.4.5.3. Հետվճարային մոնիտորինգի գրանցող սարք</p> <p>Կարո՞ղ եք սահմանել ընդհանուր մուտքերի քանակը, որոնք պետք է նախատեսվեն յուրաքանչյուր բջիջի համար, և սահմանել, թե որ բջիջները պետք է համարվեն հետվճարային մոնիտորինգի գրանցող սարքի համակարգի մաս:</p>	<p>Տե՛ս Պարզաբանում No. 2-ի կետ 67-ը:</p>
35.	<p>Բաժին VI. Գործատուի պահանջները 5. 220 Վ և 48 Վ հաստատուն հոսանքի ուղղիչ</p> <p>Գործատուի պահանջները տրամադրում են տեխնիկական բնութագրեր 48 Վ հաստատուն հոսանքի էլեկտրաէներգիայի մատակարարման համար, մինչդեռ գնային աղյուսակում այդ կետը բացակայում է: Մեր կարծիքով այսպիսի սարքավորումն անհրաժեշտ է կապի սարքավորման էլեկտրաէներգիայի մատակարարման համար: Կարո՞ղ եք խորհուրդ տալ, թե գնային աղյուսակի որ կետում է պետք ներառել այդ սարքավորումը:</p>	<p>Եթե պահանջվում է 48 Վ փոփոխական հոսանքի սարքավորում, դուք կարող եք ներառել այն փոփոխական և հաստատուն հոսանքների համակարգերում:</p>
36.	<p>Բաժին VI, Գործատուի պահանջներ, Տեխնիկական աղյուսակ, Հիմնական տվյալներ, Ավտոտրանսֆորմատոր 220/110 կՎ 200 ՄՎԱ</p> <p>Խնդրում ենք հաստատել, որ Հայտատուները պետք է առաջարկեն ավտոտրանսֆորմատոր, այլ ոչ թե ուժային տրանսֆորմատոր:</p>	<p>Տե՛ս մրցութային փաստաթղթերը:</p>
37.	<p>Բաժին VI. Գործատուի պահանջները, Տեխնիկական աղյուսակ Հիմնական տվյալներ, Ուժային տրանսֆորմատոր 110/35/6 կՎ 27,5 ՄՎԱ</p> <p>Տրանսֆորմատորի նոմինալ հզորությունը սահմանված է 27,5 ՄՎԱ, մինչդեռ երկրորդային փաթույթի նոմինալ հզորությունը 20 ՄՎԱ է, իսկ</p>	<p>Տե՛ս Պարզաբանում No.2, Նախամրցութային հանդիպման պարզաբանումների խնդրանք, կետ 6, որտեղ նշված են 35 կՎ և 6 կՎ լարման սպառողների փաստացի բեռերը: 35 կՎ լարման համար բեռը կազմում է 14,5 ՄՎտ, որը հավասար է 17,8 ՄՎԱ-ի, իսկ 6 կՎ լարման համար բեռը կազմում է 7 ՄՎտ, որը հավասար է 8,2 ՄՎԱ-ի:</p>

No.	Հարցումներ հայտատուների կողմից	Պարզաբանում Գործատուի կողմից
	Երրորդային փաթույթին՝ 11 ՄՎԱ, ընդհանուր նումինալ հզորությունը 31 ՄՎԱ է, ինչը գերազանցում է տրանսֆորմատորի նումինալ հզորությունը: Խնդրում ենք հաստատել կամ վերանայել տեխնիկական բնութագիրը:	Այսինքն՝ 17,8 ՄՎԱ + 8,2 ՄՎԱ = 26 ՄՎԱ:
38.	<p>Հայտահրավեր և Պարզաբանում No.1-ի մեր խնդրանքը, առ 12.10.2015 թ.</p> <p>Հղում է արված նաև հայտերի ներկայացման ժամկետի երկարաձգման համար հայտատուների մեծամասնության խնդրանքին նախամրցութային հանդիպման ժամանակ, առ 28.10.2015 թ.:</p> <p>Մենք ևս մեկ անգամ կրկնում ենք մեր խնդրանքը՝ Աշխատանքների ծավալի բարդության պատճառով դեռևս առկա է պարզաբանման (պարզաբանումների) կարիք և պատշաճ ու մրցունակ առաջարկ պատրաստելու նպատակով խնդրում ենք ձեզ երկարաձգել այս հայտի ներկայացման ժամկետը առնվազն մինչև 15.12.2015 թ.:</p>	Հայտերի ներկայացման վերջնաժամկետը երկարաձգվել է 3 շաբաթով մինչև 2015 թ.-ի նոյեմբերի 30, ժամը՝ 13:00 (տեղական ժամանակով): Հետագա երկարաձգում հնարավոր չէ:
39.	<p>ՀՊ 8.2 և ՀՊ 25.2.2, ԸՊ 25.1.1. և ԸՊ 25.3.1</p> <p>Ավարտման, գործարկման և շահագործման ընդունում</p> <p>Խնդրում ենք պարզաբանել, թե արդյոք մենք ճիշտ ենք ընկալել Պայմանագրի ընդհանուր և յուրահատուկ պայմանները, առ այն, որ ավարտման ժամկետը չի ներառում գործարկում, Երաշխիքային տեստավորումներ և շահագործման ընդունում: Մեր ընկալումը հիմնված է հետևյալ հոդվածների վրա՝</p> <p>ՀՊ 8.2: Ավարտման ժամկետ՝ 17 ամիս</p> <p>ԸՊ 25.1.1. Գործարկումը պետք է մեկնարկի ավարտման հավաստագրի ստացումից հետո:</p> <p>ԸՊ 25.3.1: Շահագործման ընդունումը տեղի կունենա, երբ Երաշխիքային տեստավորումները ավարտվեն կամ ամենաուշը ավարտումից 60 օր հետո, ինչպես նշված է ՀՊ 25.2.2-ում:</p> <p>Եթե մենք ճիշտ ենք ընկալել, խնդրում ենք վերանայել Պարզաբանում No. 4-ի 33-րդ կետի ձևը պատասխանը:</p>	Անհրաժեշտության դեպքում Պայմանագրի վերջնականացման փուլի ընթացքում վարկագրի արդյունավետության ժամանակահատվածը կսահմանվի այնպես, որ այն ծածկի վճարման բոլոր փուլերը, ներառյալ շահագործման ընդունումը:
40.	<p>Բաժին VI. կետ 1.2.4.17.2 «Առկա յուղի պահպանման բաքի նորոգում»</p> <p>Ի՞նչ է նշանակում «Առկա յուղի պահպանման բաքի նորոգում»: Որքա՞ն է բաքի (բաքերի) մեծությունը և ի՞նչ տեսակի է (են):</p>	Տե՛ս սույն Պարզաբանում No. 5-ի 1-ին կետը:
41.	<p>Բաժին VI. 1.2.4.17.2 կետ «ավտոմատ ջրցան պաշտպանիչ համակարգի և յուրաքանչյուր ուժային տրանսֆորմատորի համար դրանց ջրի պոմպերի ներդրում....»:</p> <p>Խնդրում ենք պարզաբանել հետևյալը՝ «ավտոմատ ջրցան պաշտպանիչ</p>	Այս համակարգը պետք է նախատեսվի բոլոր տրանսֆորմատորների համար:

No.	Հարցումներ հայտատուների կողմից	Պարզաբանում Գործատուի կողմից
	<p>համակարգի և յուրաքանչյուր ուժային տրանսֆորմատորի համար դրանց ջրի պոմպերի ներդրում»:</p> <p>Արդյո՞ք այս համակարգն անհրաժեշտ է միայն նոր տրանսֆորմատորների համար, թե՞ առկա T5, T7, T9 և T10 տրանսֆորմատորները նույնպես պետք է ներառվեն:</p>	
42.	<p>Բաժին VI. 1.2.4.17.2 կետ «տրանսֆորմատորային յուղի հորի և նոր տրանսֆորմատորների ու ավտոտրանսֆորմատորի հակահրդեհային պատերի ներդրում»:</p> <p>Խնդրում ենք հաստատել, որ հակահրդեհային պատերը պետք է լինեն պայմանագրի ծավալի մեջ, քանի որ առկա տրանսֆորմատորի համար հակահրդեհային պատեր չկան, իսկ նոր ավտոտրանսֆորմատորը առանձին է:</p> <p>Եթե հակահրդեհային պատերը պարտադիր են, ապա խնդրում ենք հստակեցնել տրանսֆորմատորի քանի կողմերում են անհրաժեշտ:</p>	<p>Տարբերություն չկա, թե արդյոք կան հակահրդեհային պատեր առկա տրանսֆորմատորների համար, թե ոչ: Եթե ըստ նախագծային ստանդարտների պահանջվում են հակահրդեհային պատեր, ապա դրանք պետք է ներառվեն Կապալառուի ծավալի մեջ:</p>
43.	<p>Բաժին VI. 1.2.4.17.2 կետ «հակահրդեհային պաշտպանիչ ավազանի ներդրում»:</p> <p>Խնդրում ենք պարզաբանել/սահմանել պահանջները, ներառյալ «հակահրդեհային պաշտպանիչ ավազանի» տեղանքը:</p>	<p>Այն պետք է լինի՝ համաձայն նախագծային նորմերի և ստանդարտների: Տեղանքը նշված է գլխավոր հատակագծում:</p>
44.	<p>220 կՎ լարման ենթակայանի տարածքում առկա շենքը</p> <p>Արդյո՞ք անհրաժեշտ է ապամոնտաժել 220 կՎ լարման ենթակայանի տարածքում առկա շենքը:</p>	<p>Մեր դիտարկումների համաձայն՝ 220 կՎ լարման ենթակայանի տարածքում որևէ շենք չկա: Եթե Կապալառուն 220 կՎ լարման ենթակայանի տարածքում կգտնի որևէ շենք, անշուշտ այն պետք է ապամոնտաժել:</p>
45.	<p>Պարզաբանում No 4, հարց No 31, Ռելեական պաշտպանության դրվածքների վերաբերյալ</p> <p>Խնդրում ենք հաստատել, որ «ռելեական պաշտպանության դրվածքները» պայմանագրի շնորհման դեպքում կտրամադրվեն «Երևանի ՋԷԿ»-ի կամ ԷԷՀՕ ՓԲԸ կողմից:</p>	<p>Ռելեական պաշտպանության բոլոր դրվածքները պետք է տրամադրվեն ԷԷՀՕ ՓԲԸ կողմից:</p>
46.	<p>1.2.4.6.1 1.2.4.6.3 էջեր 149-150, առկա RTU</p> <p>Ինչ վերաբերում է Պարզաբանում No 4, հարց No 42, 2-ին՝</p> <p>1. Խնդրում ենք պարզաբանել, թե արդյոք առկա RTU-ի և ԹԿՀ-ի (թվայնացված կառավարման համակարգ) (Station Unit) միջև պետք է կատարվի տվյալների փոխանակում:</p> <p>2. Խնդրում ենք պարզաբանել, թե արդյոք առկա RTU-ի և նոր RTU-ի միջև պետք է կատարվի տվյալների փոխանակում:</p> <p>3. Տվյալների փոխանակման դեպքում խնդրում ենք հաստատել, թե արդյոք IEC60870-5-104 կապի պրոտոկոլը կարող է օգտագործվել:</p>	<p>1.,2., և 3: Խնդրում ենք պարզաբանել, թե ինչ նկատի ունեք «առկա RTU» ասելով:</p>

No.	Հարցումներ հայտատուների կողմից	Պարզաբանում Գործատուի կողմից
47.	<p>1.2.4.6.1, 1.2.4.6.3 էջեր 149-150, նոր RTU</p> <p>Ինչ վերաբերում է Պարզաբանում No 4, հարց No 43, 1-ին և 2-ին՝</p> <p>1. Խնդրում ենք պարզաբանել, թե արդյոք նոր RTU-ի և ազգային SCADA-ի միջև ապահովվում է անմիջական կապ կամ դա տեղի է ունենում DCS (ԹԿՀ) gateway-ի միջոցով:</p> <p>2. Խնդրում ենք հաստատել, որ նոր RTU-ն միակն է (մեկ սարք): Օրինակ՝ պահանջվում է Station Unit՝ որպես պահուստային սարք:</p>	<p>1. Խնդրում ենք պարզաբանել, թե ինչ նկատի ունեք «DCS gateway» ասելով:</p> <p>2. Տե՛ս մեր պատասխանները Պարզաբանում No 4-ում, հարց No 43:</p>
48.	<p>1.2.4.5.3. էջ 148 Հետվթարային մոնիտորինգի գրանցող սարք</p> <p>Պարզաբանում No 4, հարց No 47-ի վերաբերյալ՝</p> <p>Քանի որ առաջարկվող պաշտպանության ռեժենները ներառում են հետվթարային մոնիտորինգի գրանցող սարք, որը կատարում է տեխնիկական պահանջները, մենք խնդրում ենք հաստատել, թե արդյոք անհրաժեշտ է լրացուցիչ և արտաքին հետվթարային մոնիտորինգի գրանցող սարք:</p>	<p>Տե՛ս մեր Պարզաբանում No 2-ի պատասխան No. 7-ը:</p>
49.	<p>PLC սարքավորում</p> <p>Պարզաբանում No 4, հարց No 47-ի վերաբերյալ՝</p> <p>Քանի որ առաջարկվող պաշտպանության ռեժենները ներառում են հետվթարային մոնիտորինգի գրանցող սարք, որը կատարում է տեխնիկական պահանջները, մենք խնդրում ենք հաստատել, թե արդյոք անհրաժեշտ է լրացուցիչ և արտաքին հետվթարային մոնիտորինգի գրանցող սարք:</p>	<p>Խնդրում ենք պարզաբանել:</p>
50.	<p>110 կՎ լարման նոր ենթակայանի տարածքի «գրոյական» մակարդակը</p> <p>Ներկայում 110 կՎ լարման ենթակայանի նախատեսված տարածքում անձրևաջրերի համար առկա է կոլեկտոր (ավազան): Առկա գրունտի որակը շատ ցածր է:</p> <p>Արդյո՞ք թույլատրելի է նոր 110 կՎ լարման ենթակայանի մակարդակը պահել ավելի ցածր մակարդակի վրա, քան առկա 110 կՎ լարման ենթակայանինն է:</p> <p>Եթե այո, ապա որտե՞ղ է միացված ներքին դրենաժի համակարգը:</p> <p>Եթե անհրաժեշտ է հետ լցնել հարթակը (բարձրացնել մակարդակը) 110 կՎ լարման ենթակայանի համար, խնդրում ենք սահմանել, թե ինչպես է դա գնահատվելու:</p>	<p>Ձեր հարցի բոլոր պատասխանները անմիջականորեն կապված են Կապալառուի կողմից իրականացվելիք գրունտի ուսումնասիրության արդյունքների հետ: Գրունտի ուսումնասիրության այդ ծախսերը պետք է ներառվեն գնային աղյուսակում շինարարական աշխատանքների ծավալի մեջ:</p>
51.	<p>Անձրևաջրերի համար կոլեկտոր (ավազան)</p> <p>Համաձայն մրցութային պահանջի՝ անձրևաջրերի համար առկա</p>	<p>Դա անձրևաջրերի համար կոլեկտոր (ավազան) չէ: Կա առկա արտադրական/հեղեղաջրերի կոլեկտոր (տրամագիծը՝ 1500 մմ), որը</p>

No.	Հարցումներ հայտատուների կողմից	Պարզաբանում Գործատուի կողմից
	<p>կոլեկտորի (ավազանի) տարածքը պետք է կրճատվի (մոտավորապես 50%)</p> <p>Խնդրում ենք հաստատել, որ անձրևաջրերի համար առկա կոլեկտորի (ավազանի) կրճատված տարածքը կկատարի անհրաժեշտ պահանջները:</p> <p>Եթե ոչ, ապա խնդրում ենք նշել, թե ինչպես վարվենք:</p>	<p>պետք է միացվի նոր ենթակայանի (անձրևաջրերի համար) դրենաժային համակարգին:</p>
52.	<p>Armenia YTPC Substation_final_corrected_upd.pdf էջ 61/691 1.3.14.11 կետ տրանսֆորմատորային «տեսավորման սարքավորման» ծավալը</p> <p>Գնային աղյուսակի 1.3.14.11 կետում պահանջվում է «Տեսավորման բարձրացնող տրանսֆորմատորային սարքավորում»</p> <p>Ի՞նչ տեսակի և ծավալի տեսավորման սարքավորում էք դուք պահանջում և ի՞նչ տիպի տրանսֆորմատորի համար:</p>	<p>Տե՛ս Պարզաբանում No. 4.-ի 38-րդ կետը:</p>
53.	<p>Armenia YTPC Substation_final_corrected_upd.pdf էջ 56/691 1.1.7.3 կետ 1.1.7.3 կետում նշված է. «250 կՎԱ դիզելային խմբի մատակարարում»</p> <p>Հետևյալ հարցերը սահմանման համար՝</p> <ul style="list-style-type: none"> - ներքին թե՞ արտաքին մոնտաժում - ֆիքսված թե՞ շարժական տեղակայում - բաքի չափսը - արդյոք անհրաժեշտ է դիզելային հոր - աշխատանքային ռեժիմ (աշխատանքի բաժանում/անջատում) 	<ul style="list-style-type: none"> - ներքին մոնտաժում - ֆիքսված - ապահովվելու ութժամյա աշխատանքային ռեժիմ - դիզելային հոր չի պահանջվում - աշխատանքային ռեժիմ՝ ենթակայանի հոսանքազրկման դեպքում
54.	<p>1.2.4.6.1, 1.2.4.6.3 էջեր 149-150 Առկա RTU</p> <p>Մենք ունենք հետևյալ հարցերը՝</p> <p>1 Բարձր լարման ենթակայանից քանի՞ չափված մեծություններ են ներկայում միացված առկա RTU-ին:</p> <p>2. RTU-ի չափված մեծությունների դեպքում (լարում, էլեկտրական հոսանք, հզորություն) ինչպիսի չափումներ են առկա՝ 4-20mA կամ 0-100V/0-1A: Կցանկանայինք իմանալ, թե արդյոք առկա է ուղղակի չափում, թե՞ օգտագործվում են փոխակերպիչներ:</p>	<p>1. Ներկայում միացված են 275 հեռաչափման մեծություններ և 251 հեռաազդանշաններ:</p> <p>2. 0-100V / 0-5A. Օգտագործվում են փոխակերպիչներ:</p>
55.	<p>1.2.1.4.2.2 էջ 134, երրորդային փաթույթով 110 կՎ լարման տրանսֆորմատորների քանակը</p> <p>Խնդրում ենք պարզաբանել, թե քանի տրանսֆորմատորներ ունեն երրորդային փաթույթ:</p> <p>Համաձայն միագիծ սխեմայի՝ հինգ հատ (T2 & T9 & T10 110/6/6 կՎ և T1 և T2 110/35/6 կՎ), սակայն, համաձայն 1.2.1.4.2.2 կետի, ընդամենը պահանջվում է երկու հատ (T1 և T2 110/35/6 կՎ)</p>	<p>27,5 ՄՎԱ երկու նոր տրանսֆորմատորները և առկա T9 և T10 տրանսֆորմատորները ունեն երրորդային փաթույթ:</p>
56.	<p>1.2.1.4.2.2 էջ 134 Առկա 110 կՎ լարման տրանսֆորմատորներ</p>	<p>1. Մենք հաստատում ենք, որ գներատորի պաշտպանությունը</p>

No.	Հարցումներ հայտատուների կողմից	Պարզաբանում Գործատուի կողմից
	<p>Տրանսֆորմատորների հետ առկա են 110 կՎ լարման բջիջներ, որոնք միացված են գեներատորներին (համաձայն միագիծ սխեմայի T5 110/6 կՎ-ի և T2 110/35/6կՎ-ի): Մենք ունենք հետևյալ հարցերը՝</p> <p>1. Մենք կարծում ենք, որ գեներատորի պաշտպանությունը ծավալի մաս չի կազմում: Խնդրում ենք հաստատել:</p> <p>2. Մենք կարծում ենք, որ ճգրիտ պաշտպանության ֆունկցիոնալության համար գեներատորի բոլոր անհրաժեշտ պաշտպանության ազդանշանները կտրամադրվեն պատվիրատուի կողմից (անջատիչի անջատման ազդանշանում, ռևերսային սինքրոնիզացիա): Խնդրում ենք հաստատել:</p>	<p>ծավալի մաս չի կազմում:</p> <p>2. Խնդրում ենք պարզաբանել, թե որ գեներատորները դուք նկատի ունեք:</p>
57.	<p>1.2.7.1.1. էջ 151 Հեռահաղորդակցություն</p> <p>Մենք ունենք հետևյալ հարցերը՝</p> <p>1. Խնդրում ենք հաստատել, թե արդյոք RTU-ի և ազգային SCADA-ի միջև « տվյալների փոխանցման SDH սարքավորումների ցանցը» առկա է, թե՞ այն պետք է մատակարարվի:</p> <p>2. Եթե առկա է SDH սարքավորում, ապա խնդրում ենք նշել արտադրողին և մոդելը, ինչպես նաև այն, թե արդյոք սարքակազմը պետք է ընդլայնվի հեռահաղորդակցության համար մրցութային պահանջները իրականացնելու նպատակով՝</p> <p>a) IP հեռախոս</p> <p>b) ODF պանելներ</p> <p>c) ԹԿՀ-ի և ազգային SCADA-ի միջև կապ (IEC6087-5-104):</p>	<p>1. RTU-ի և ազգային SCADA-ի միջև SDH սարքավորումն առկա է:</p> <p>2. SDH սարքավորման արտադրողը՝ General Electric, մոդելը՝ Multilin: Այո, սարքակազմը պետք է ընդլայնվի:</p>